ՎԱՐԱԶԴԱՏ ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՓՈՒԼԸ

ԷԴԳԱՐ ՎԱՐՇԱՄՅԱՆ

Բանալի բառեր – Վարազդատ Արշակունի, Շապուհ Բ, Հռոմեական կայսրություն, Մուշեղ Մամիկոնյան, Մանվել Մամիկոնյան, Մեծ Հայքի հայոց թագավորություն, Սասանյան Պարսկաստան, Բատ Սահառունի:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վարազդատ Արշակունու գահակալության պատմափուլը հայոց պատմության մեջ ամենահետաքրքրական ու կարևոր ժամանակաշրջաններից է: Այն իր մեջ պարունակում է իրադարձություններ, որոնք հենքային նշանակություն ունեցան հայոց թագավորության հետագա գոյության համար: Խնդրո առարկա դարաշրջանին կամ դրա առանձին ենթափուլերի զարգացումներին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ: Նրանցից յուրաքանչյուրը Վարազդատի գործունեությունը քննության է առել ավել կամ պակաս մանրամասնությամբ՝ լուսաբանելով դրա դարաշրջանային բնույթն ու հանգուցային նշանակությունը: Հայոց թագավորի վարած ներքին և արտաքին քաղաքականության մասին պարզաբանումներ մտցնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել հայ և օտարալեզու պատմիչների երկերում արտացոլված տեղեկությունները, որոնք անգնահատելի սկզբնաղբյուր են հիմնախնդրի ուսումնասիրության համար:

374-376 ԹԹ. ՊԱՐՄԿԱ - ՀՌՈՄԵԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

374 թ. Պապ Արշակունու սպանությունից հետո Մեծ Հայքում իշխանությունը, փաստացի, կենտրոնացել էր Մուշեղ Մամիկոնյանի ձեռքում: Միևնույն ժամանակ, հայոց թագավորության շուրջ տեղի էին ունենում հետաքրքիր արտաքին քաղաքական զարգացումներ: Դատելով Ամիանոս Մարկելինոսի հաղորդած տեղեկություններից՝ Շապուհ Բ-ը փորձեց Կ.Պոլիս ուղարկված դեսպանի միջոցով Վաղես կայսրին համոզել, որ երկու պետությունների միջև կռվախնձոր դարձած Մեծ Հայքի թագավորությունը համատեղ ջանքերով վերացվի: Սակայն, կայսրը դեսպանին տրված պատասխանում հստակ մատնանշեց, որ նախկին պայմանագրե-

րի մեջ փոփոխություն մտցնել չի կարելի, քանի որ դրանք ընդունվել են փոխհամաձայնությամբ[1]: Հռոմեա-պարսկական բանակցությունների ընթացքում կայսրն իբրև թագավոր Մեծ Հայք ուղարկեց Վարազդատին (374-378)[2], որն Արշակունիների տոհմից էր[3]: Շուտով Հռոմի և Պարսկաստանի միջև հարաբերությունները կրկին սրվեցին, ուստի Վաղեսի հրամանով հեծելազորի առաջնորդ Վիկտորը և Միջագետքի դուքս Ուրբիկիոսը 376 թ. անհապաղ գնացին Պարսկաստան՝ իրենց հետ տանելով Շապուհ Բ-ին ուղղված կայսեր վճիռը հետևյալ բովանդակությամբ. «եթե թագավորը արդարության կողմն է և բավականանում է իր ունեցվածքով, ինչպես նաև այդ անընդհատ կրկնում է, ապա հանցանք է գործում՝ աչք դնելով Հայաստանին, որի բնակչությանը թույլ է տրված ապրել ըստ իր բարեհաճության: Իսկ եթե, ինչպես դա պայմանավորված է, հաջորդ տարեսկզբին Սուրմակին (Վիրքի գահընկեց արված թագավոր) տրված օգնական զորքերն անարգել չվերադառնան, նրան (Շապուհին) կհարկադրեն կատարել այն, ինչը հրաժարվում է կամավոր անել»[4]: Բ. Հարությունյանը նշում է, որ այս տեղեկությունը շատ հետաքրքիր է այն առումով, որ Սուրմակը ևս հարել էր Շապուհին ու նրանից ստացել օգնական ուժեր, ինչը զայրացրել էր Վաղեսին[5]: Ամիանոսի պնդմամբ՝ Վաղեսի ուղարկած դեսպանությունը բանակցությունների ընթացքում համաձայնվել էր, որ Մեծ Հայքի մի քանի գավառներ անցնեն կայսրության վերահսկողության ներքո: Չնայած պատմիչը դրանց անվանումները չի նշել, Ն. Ադոնցը հակված է կարծելու, թե դրանք Բալահովիտն ու Հաշտյանքն էին[6]: Բ. Հարությունյանը նշում է, որ դա անընդունելի է և ավելի շատ խոսք կարող էր լինել Անձիտի, Անգեղտան և Մեծ Ծոփքի մասին, որոնք Մեծ Հայքի 387 թ.

---

[1] Տե՛ս **Аммианъ Марцеллинъ,** История, вып. III, Киевъ, 1908, с. 197-199.

[2] Տե՛ս **R. Hewsen,** The Successors of Tiridates The Great: A Contribution to The History of Armenia in The Fourth Century, Revue des Études Arméniennes, 1978-1979, Tome XIII, Paris, p. 126.

[3] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** Պատմություն հայոց, Ե., 1987, էջ 356, Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1981, էջ 376:

[4] **Аммианъ Марцеллинъ**, с. 199-202, N. Lenski, Failure of Empire: Valens and the Roman State in the Fourth Century A.D., London, 2002, p. 183-184.

[5] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի թագավորությունը IV դ. վերջին և V դ. առաջին երեսնամյակին, Հայոց պատմություն, հ. Բ, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք Ա, (IV դարի սկիզբ – IX դարի կես) (այսուհետև՝ Հայոց պատմություն), Երևան, 2018, էջ 145:

[6] Տե՛ս **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Ե., 1987, էջ 56:

բաժանումից հետո կայսրությունը վերածել էր սատրապական իշխանությունների[1]:

Հռոմեական դեսպանության վերադարձից հետո կայսրություն ժամանեց պարսից դեսպան Սուրենը: Նա էլ իր հերթին կայսրին առաջարկեց վերոհիշյալ գավառները, որոնք ըստ Ամիանոսի, հռոմեական դեսպաններն ընդունել էին առանց մտածելու: Սուրենը Հռոմում ոչնչի չհասավ, իսկ կայսրությունը պատրաստվեց պատերազմի: Շապուհն ի պատասխան կարգադրեց հետ գրավել կայսրությանը հանձնված գավառները, իսկ դիմադրության հանդիպելու կամ Սուրմակին օգնության ուղարկված զորքերի ծանր կացության մեջ հայտնվելու դեպքում ուժ կիրառել: Հիշյալ գավառներն առանց դիմադրության հետ գրավվեցին՝ օգտվելով այն հանգամանքից, որ գոթերը հեղեղել էին Թրակիան[2] և կայսրությունը ժամանակ չուներ զբաղվելու Արևելքի գործերով: Ն. Բեյնսն իրավամբ նշում է, որ վերոնշյալ հռոմեա-պարսկական բանակցությունները միտված էին բաժանելու Հայաստանը՝ հիմնական թիրախ ունենալով Արշակունիների դինաստիայի անկումը[3]: Ամփոփելով վերոնշյալը, կարծում ենք, որ դեռևս Պապ Արշակունու օրոք պարտվելով հայ-պարսկական պատերազմում և համոզվելով որ հազիվ թե հնարավոր լինի կարգավորել հայ-պարսկական հարաբերությունները, Շապուհ Բ-ը փորձեց Հռոմի հետ բանակցությունների միջոցով բաժանել Մեծ Հայքի թագավորությունը: Այդ բանակցությունները տեղի ունեցան 374-376 թթ., երբ Մեծ Հայքում փաստացի գահակալում էր Վարազդատը: Սակայն այս փուլում Հռոմում մերժեցին պարսից առաջարկը: Այդ մերժման գլխավոր պատճառներից մեկը Մեծ Հայքում Հռոմի քաղաքական ազդեցության ամրապնդումն էր, որի հետևանքով Պապի սպանությունից հետո հայ նախարարների մեծ մասը հարել էր հռոմեական կողմնորոշմանը: Դրա լավ ապացույցն է նաև Վաղեսի կողմից Վարազդատին հայոց գահին կարգելու փաստի ընդունումը: Մյուս կողմից, գոթերի ներխուժումը դժվարին կացության էր ստեղծել կայսրության համար: Դրանով հանդերձ, այդ բանակցությունները ցույց տվեցին, որ տարածաշրջանի բաժանումը երկու գերտերությունների միջև գտնվում է Պարսկաստանի արտաքին քաղաքականության օրակարգում: Այժմ անդրադառնանք Մեծ Հայքի ներքաղաքական խնդիրներին, որոնք

---

[1] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, (Արևմտյան և հարավային աշխարհներ), Ե., 2001, էջ 214-217:

[2] Տե՛ս **Аммианъ Марцеллинъ**, с. 218-220.

[3] Տե՛ս **N. Baynes,** Rome and Armenia in the Fourth Century, "The English Historical Review", 1910, October, volume XXV, New York, p. 641-642.

հռոմեա-պարսկական բանակցությունների ընթացքում հետաքրքիր էվոլ-յուցիա ունեցան։

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ

Վարազդատի գահակալության սկզբում երկրի իշխանությունը կենտրոնացավ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի ձեռքում։ Փավստոս Բուզանդը, անդրադառնալով Վարազդատի գահակալությանը, գրում է. «Եկն բազում շքով եմուտ յերկրին Հայոց, և թագաւորեաց յերկրին Հայոց։ Եւ էր նա մանուկ յաւուրց, լի արութեամբ, կորովի ձեռօք, քաջ սրտիւ, և ՝ի մտաց թեթև, մանգաբարոյ տղայահանճար մանկամիտ»[1]։Մովսես Խորենացու բնութագրմամբ՝ «այս Վարազդատ էր տիովք մանուկ, սրտեայ, անձնեայ, ուժեղ, լի ամենայն գործովք արութեան, և յոյժ կորովի նետաձգութեամբ։ Նախ ի Պիսաս (քաղաք Հունաստանի Էլիտա նահանգում) զբռնամարտիկսն յաղթելով. դարձեալ յԱրեգ քաղաքի Ելլադացւոց յօր հասակի կոտորեաց առիւծս, յորում փառս Ողոմպիայ խաղուն հանդիսի յըմբշամարտկացն երևի և յարգի»[2]։ Հասնելով Մեծ Հայք՝ Վարազդատը Դարանաղի գավառում մարտի է բռնվում ասորի ավազակների հետ և ստիպում հանձնվել։ Սկզբում Վարազդատի խորհրդատուն Մուշեղ Մամիկոնյանն էր, սակայն շուտով երիտասարդ գահակալը սկսեց երկիրն ինքնուրույն կառավարել։ Ըստ Մովսես Խորենացու՝ նա արհամարեց նաև հռոմեացի զորավարներին և անգամ դեսպաններ ուղարկեց Շապուհի մոտ՝ խնդրելով նրա դուստրերից մեկի ձեռքը և խոստանալով անցնել պարսից արքայի կողմը[3]։ Վարազդատն իրեն շրջապատեց նոր մարդկանցով, որոնց մեջ առանձնանում էր նրա դայակ Բատ Սահառունին։ Այսպիսով, հռոմեա-պարսկական բանակցությունների համընթաց, որտեղ արծարծվում էր տարածարջանը բաժանելու հարցը, Մեծ Հայքում ներքաղաքական կյանքը կտրուկ սրվում է։ Վարազդատը փորձեց շարունակել Պապի արտաքին քաղաքականությունը՝ կարգավորելով հարաբերությունները պարսից արքունիքի հետ։ Մյուս կողմից երկրում ընթանում էր իշխանական պայքար, որին զոհ գնաց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը։ Հ. Մանանդյանը հակված է կարծելու, որ Պապից սկսած Արշակունի գահակալները միայն ա-

---

[1] **Փավստոս Բուզանդ**, էջ 356։
[2] **Մովսես Խորենացի**, էջ 376։
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 376-378։

նունով էին թագավոր և խաղալիք էին կայսրության ձեռքին[1]: Կարծում ենք, որ նման տեսակետը ճիշտ չէ, քանի որ Վարազդատը հստակ ցույց տվեց, որ չի պատրաստվում լինել կայսրության կամակատարը:

Որո՞նք էին Վարազդատի և Մուշեղ Մամիկոնյանի միջև առկա լարվածության բուն դրդապատճառները: Կարծում ենք, դրանք երկուսն են.

1) Դեռ Պապի գահակալության շրջանում հայոց սպարապետը, որդեգրելով հռոմեական կողմնորոշում, փորձեց վերջինիս ծածուկ օժանդակությամբ կենտրոնացնել իշխանությունն իր ձեռքում, կարծելով, որ Արշակունիների հարստությունը թուլացել է, իսկ վատագույն դեպքում՝ երկիրը վերածել Հռոմից կախյալ մի գոտու: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մուշեղ Մամիկոնյանը, առանց Վարազդատին տեղյակ պահելու, «Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիստ հաստատել ընդ ամենայն երկիրն Հայոց. մինչև՝ ի Գանձակ սահման երկրին, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. և զամենայն ազատսն Հայոց կայսերական թօշակօքն զինուորել, սոյնպէս և զօրաց երկրին Հայոց, զի այսպէս ամենայն զգուշութիւն լիցի առ՝ ի թշնամեաց իւրեանց՝ ի զօրացն Պարսից»[2]: Անդրադառնալով պատմիչի այս հաղորդած տեղեկությանը՝ Հ. Մանանդյանը և Լ. Բաբայանը նշում են, որ այս քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում Մերուժան Արծրունու կողմից մի քանի տարի առաջ իրականացվող ծրագրից, քանզի երկուսն էլ, զոհաբերելով Մեծ Հայքի թագավորության պետական շահը, տրամադիր են եղել հանձնելու երկիրը հարևան հզոր պետություններին[3]: Լեոն նշում է, որ այդ քաղաքականությունը նպատակ էր հետապնդում վերացնելու հայոց թագավորի իշխանությունը, նրան դարձնելու կայսրի ձեռքին խաղալիք[4]: Ռ. Մաթևոսյանը նշում է, որ այդպիսի քաղաքների կառուցումը հռոմեական ազդեցության վտանգ չէր պարունակում՝ այդ ծրագրի իրականացումը կապելով կայսեր լայն օժանդակության հետ, որը պետք է պաշտպաներ Մեծ Հայքի անվտանգությունը պարսկական անվերջ ագրեսիայից[5]: Ա. Ներսիսյանը նշում է, որ Մամիկոնասեր

---

[1] Տե՛ս **Մանանդյան Հ.,** Քննական տեսության հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, մասն Ա, Արշակունիների հաստատումից մինչև Մարզպանության շրջանը (I-V դ.դ.), Ե., 1957, էջ 224:

[2] **Փավստոս Բուզանդ,** էջ 358:

[3] Տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 224-225, Բաբայան Լ., Քաղաքական կողմնորոշման արտացոլումը V-VII դարերի հայ պատմագրության մեջ, «Պատմաբանասիրական հանդես», 1983, № 1, էջ 92:

[4] Տե՛ս **Լեո,** Եկերի ժողովածու, հատոր Ա, Ե., 1966, էջ 489:

[5] Տե՛ս **Մաթևոսյան Ռ.,** Մուշեղ Մամիկոնյանը IV դարի հայ նշանավոր պետական գործիչ, «Պատմաբանասիրական հանդես», 1990, № 3, էջ 90-91:

Փավստոսը, որը ցանկանում է վարկաբեկել Վարազդատին (ինչն, ի դեպ, տեսնում ենք նաև Պապի պարագայում), չի կարողանում սքողել այն պարզ ճշմարտությունը, որ Մամիկոնյանները հակադրվում էին հայոց արքային ոչ ի շահ հայոց պետականության[1]: Բ. Հարությունյանը նշում է, որ իրականում, չհասնելով իր քաղաքական ծրագրերի իրականացմանը՝ հայոց սպարապետը փաստորեն դավաճանական գիծ էր որդեգրել՝ առանց թագավորի անգամ տեղյակ պահելու փորձելով զոհաբերել երկրի անկախությունը[2]: Ա. Վարդանյանը նշում է, որ դրանով ամբողջ Մեծ Հայքը հայ իշխող վերնախավի թեթև ձեռքով առանց պայքարի նվիրվում էր կայսրությանը[3]: Ամփոփելով վերոնշյալը, կարող ենք արձանագրել, որ դեռևս Պապի գահակալության շրջանում Մուշեղը ձգտում էր բարձրագույն իշխանությունը երկրում կենտրոնացնել իր ձեռքում, սակայն չունենալով զգալի աջակցություն, ձախողվեց: Արդեն Վարազդատի օրոք այդ քաղաքականության տրամաբանությունը փոխվեց: Օգտվելով հայոց թագավորի երիտասարդ լինելու հանգամանքից և սկզբնական շրջանում լինելով նրա խորհրդատուն, Մուշեղը փորձում էր սահուն և անցնցում հայոց թագավորությունը վերածել հռոմեական ենթակա տարածքի: Թագավորության թուլացման այս քաղաքականությունը չհանդուրժեց Վարազդատը, ով իրականացնում էր քայլեր պետականության ամրապնդման ուղղությամբ: Այդ քաղաքականությունը չէին կարող հանդուրժել նաև երկրի պարսկամետ ուժերը:

Թագավորին շրջապատող իշխանները և, առաջին հերթին, Բատ Սահառունին, Վարազդատին տեղյակ էին պահում Մուշեղ Մամիկոնյանի քայլերի մասին: Թերևս Բատ Սահառունու դեպքում դեր էր կատարում նաև սպարապետությանը տիրանալու ձգտումը, սակայն Մուշեղի դեմ հարուցված մեղադրանքները, ինչպես ցույց է տբել Յ. Մարկվարտը, հիմնավոր էին[4]:

Մուշեղի և նրա կողմնակիցներին նկատմամբ Վարազդատի ավելի զգուշավոր լինելու մյուս դրդապատճառն այն էր, որ սպարապետը մեղսակից էր Հայոց արքա Պապ Արշակունու սպանության մեջ: Թագավորի կողմնակիցները՝ Բատ Սահառունին և մյուսները, Վարազդատին հաս-

---

[1] Տե՛ս **Ներսիսյան Ա.,** Վարազդատ Արշակունին և հայոց պետականության ամրապնդման վերջին փուլը, Հայագիտական հանդես, 2019, № 3(45), էջ 101:

[2] Տե՛ս **Հարությունյան Բ.,** Մեծ Հայքի թագավորությունը IV դ. վերջին և V դ. առաջին երեսնամյակին, Հայոց պատմություն, էջ 147:

[3] Տե՛ս **Վարդանյան Ա.,** Մուշեղ Մամիկոնյանի գնահատման հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2018, թիվ 1, էջ 25:

[4] Տե՛ս **J. Markwart,** Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Studien zur armenischen Geschichte, IV, Wien, 1930, s. 69-71.

կացրել էին, որ Պապ թագավորի սպանության կազմակերպման մեջ գործուն դեր են ունեցել հռոմեասեր հայ նախարարները: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Բատ Սահառունին Մուշեղ Մամիկոնյանին ներկայացնում է բազմաթիվ մեղադրանքներ. «Զի ո՞չ այն Մուշեղ է, որ ՝ի թագաւորութեան ժամանակ Պապայ ՝ի պատերազմունսն Պարսից քանիցս անգամ ձեռնահաս եղև սպանանել զՇապուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երբեմն զկանացս Շապհոյ թագաւորին ՝ի բուռն էարկ, և խնամոտ գթով ժանուարօք արձակեաց զնոսա զհետ Շապհոյ: Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ՝ի բուռն էարկ, և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին: Ո՞չ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդովք զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յունաց ՝ի վերայ թագաւորին Պապայ, մինչև ետ սպանանել»[1]: Ա. Ներսիսյանը նշում է, որ Վարազդատը նշանակված լինելով Հռոմի կողմից այն հույսով, որ կլինի նրա վասալը, այդ վասալ լինելուն ձգտող Մուշեղ Մամիկոնյանին հակադրվելով՝ փաստորեն հակադրվում էր Հռոմին՝ ցուցաբերելով պետականության ամրապնդմանը միտված քաղաքական գործիչի հատկանիշներ, որի համար երկրորդական էր իշխանությունն առանց պետականության[2]: Այսպիսով, դրվում է խնդիր՝ մեջտեղից վերացնելու Մուշեղ Մամիկոնյանին: 376 թ. սպարապետը սպանվում է խնջույքի ժամանակ[3]: Սա իր էությամբ քաղաքական սպանություն էր՝ ճնշելու Մամիկոնյանների բարձրագույն իշխանությանը ձգտելու նկրտումները:

ՊԱՅՔԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մուշեղ Մամիկոնյանի սպանությամբ երկրի ներքին քաղաքական իրադրությունը չբարելավվեց: Մյուս կողմից, հռոմեական կայսրությունում տիրող խառնակ իրավիճակը, Մուշեղ Մամիկոնյանին մեջտեղից վերացնելը, Վարազդատին ներքին և արտաքին ճակատում ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորություն էին ընձեռում: Վեստգոթերին հետ մղելու համար կայսր Վաղեսը Մեծ Հայքում գտնվող հռոմեական զորքերն ուղարկեց Թրակիա: Միևնույն ժամանակ, կայսրը, ըստ Ամմիանոսի, Պարսկաստան ուղարկեց Վիկտորին՝ հանձնարարելով բանակցել պարսիկների հետ: Սակայն կայսրի զորքերն Ադրիանապոլսի մատույցներում 378 թ. օգոստոսի 9-ին վեստգոթերից պարտվեցին, իսկ ինքն էլ

---

[1] **Փավստոս Բուզանդ**, էջ 360:
[2] Տե՛ս **Ներսիսյան Ա.,** նշվ. աշխ., էջ 102:
[3] Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 360-362:

սպանվեց[1]: Կարող ենք արձանագրել, որ մի կողմից ընթանում էին հռոմեա-պարսկական բանակցություններ Մեծ Հայքը բաժանելու համար, մյուս կողմից Հռոմում իրավիճակի կտրուկ վատթարացումը նախադրյալներ ստեղծեց Պարսկաստանի համար Մեծ Հայքում գործելու ավելի վստահ և իրագործելու իր քաղաքականությունը: Այս խառնակ իրավիճակը նպաստեց, որ հայոց թագավորության ներսում որոշակի վերադասավորումներ լինեն: Մասնավորապես, Վարազդատը երկրի սպարապետ նշանակեց Բատ Սահառունուն, իսկ Մամիկոնյան տոհմի նահապետ՝ Վաչե Մամիկոնյանին[2]: Կարծում ենք, որ այս քայլերի նպատակը Մամիկոնյանների քաղաքական նկրտումների չեղոքացումն էր:

Սակայն իրադրությունը Մեծ Հայքում չկարգավորվեց: Սասանյան Պարսկաստանը, օգտվելով տարածաշրջանում առաջացած քաղաքական վակուումից, սկսեց ակտիվորեն միջամտել հայոց թագավորության ներքին գործերին: Այդ ժամանակ էլ, ինպես նշում են Ե. Քրիսոսը և Հ. Մանանդյանը, ամենայն հավանականությամբ, Շապուհ Բ-ի հանձնարարությամբ Մեծ Հայք եկան Արտաշես Մամիկոնյանի որդիներ Մանվելն ու Կոմսը, որոնք ժամանակին գերվել էին Պարսկաստան[3]: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մանվելը և իր եղբայրը մասնակցել են քուշանների դեմ պարսից արշավանքին: Շապուհի բանակը, որը բաղկացած էր գերյալ հայերից և մյուս ժողովուրդներից, պարտություն է կրում[4]: Ըստ պատմիչի՝ ճակատամարտում «բանբեր անգամ ոչ ապրէր, բայց Մանուէլ որդի Արտաշինայ ի Մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարն իւրով Կոմսիւ, բազում քաջութիւնս կատարեալ ի նմին ճակատուն, սակայն հետիոտս ապրէին»[5]: Շարունակելով՝ պատմիչը նշում է, որ Շապուհը տեսնելով, որ իր ամբողջ բանակից փրկվել են միայն երկու հայեր, նրանց վրա բարկացավ և արտաքսեց իր երկրից[6]: Մեր կարծիքով Հ. Մանանդյանը և Ա. Վարդանյանը ճիշտ են նկատել, որ Փավստոս Բուզանդի այս տեղեկությունը հավատ չի ընծայում, և Մանվելը Մեծ Հայք եկավ Շապուհ Բ-ի համաձայնությամբ և հանձնարարությամբ[7]:

---

[1] Տե՛ս **Аммианъ Марцеллинъ,** с. 235-243.

[2] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** էջ 362-364:

[3] Տե՛ս **E. Chrysos,** Some Aspects of Roman-Persian Legal Relations, Thessaloniki, 1976, p. 39, **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 229:

[4] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** էջ 364:

[5] Նույն տեղում:

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Տե՛ս **Մանանդյան Հ.,** նշվ. աշխ., էջ 229, Վարդանյան Ա., Մանվել Մամիկոնյանը Մեծ Հայքի թագավորության խնամակալ և կառավարիչ, Պատմություն և մշակույթ, 2020, № 1, էջ 63:

Շապուհ Բ-ի հանձնարարականի դրդապատճառները հասկանալու համար, նախնառաջ, պետք է պարզաբանենք պարսից արքունիքի շահերը և նպատակները տարածարջանում։ Շապուհ Բ-ի նպատակը Սասանյանների թշնամի Արշակունիների հարստության տապալումն էր։ Այդ քաղաքականությունը պարսից արքունիքի արտաքին քաղաքական օրակարգում էր Սասանյանների Պարսկաստանում իշխանության գալուց ի վեր։ Այն ավելի ցայտուն դրսևորվեց Շապուհ Բ-ի օրոք։ Դեռևս Արշակ Բ-ի օրոք նման հանձնառությամբ էր հանդես գալիս Մերուժան Արծրունին։ Ա. Վարդանյանն իրավամբ նշում է, որ այդ ճանապարհին, հռոմեացիների օգնությամբ գահ բարձրացած Վարազդատին, որպես հակակշիռ Մեծ Հայք ուղարկեցին Մանվել Մամիկոնյանին[1]։ Պարսկական քաղաքականության արդյունքում Մեծ Հայքի թագավորությունը բախվեց նորանոր դժվարությունների։ Քաղաքական իշխանության համար սկսվեց սուր պայքար Վարազդատ Արշակունու և Մանվել Մամիկոնյանի միջև։ Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մանվելը, հասնելով Մեծ Հայք, Տարոնում հանդիպեց Վաչեին, «որ յառաջն էր լեալ նահապետ, մինչ չև եկեալ էր ի նա՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն զօր առեալ էր ի թագաւորէն Վարազդատայ։ Քանզի նա էր երէց յազգին, և Մանուելն ունէր զնահապետութեան ազգին տանուտէրութեան պատուին. և Վաչէն լինէր երկրորդ»[2]։ Բ. Հարությունյանը նշում է, որ Մանվել Մամիկոնյանը բացահայտ խախտեց ընդունված կարգը՝ Վաչեից խլելով տոհմի տանուտիրությունը, քանի որ տոհմերի ավագներին նշանակում էր թագավորը և դրա վկայությունն է Փավստոս Բուզանդի տեղեկությունն այն մասին, որ Արշակ Բ-ը Մամիկոնյան եղբայրներից ավագին նշանակել է տոհմի նահապետ, միջնեկ եղբայր Վասակին՝ սպարապետ, իսկ Վահանին՝ զորապետ[3]։

---

[1] Տե՛ս **Վարդանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 62։

[2] Փավստոս Բուզանդ, էջ 364։

[3] Անդրադառնալով Մանվելի գործունեությանը՝ Բ. Հարությունյանը նշում է, որ տանուտիրության յուրացումից հետո Մանվելն առանց թագավորի հրամանի հափշտակեց նաև սպարապետությունը (տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորությունը IV դ. վերջին և V դ. առաջին երեսնամյակին, Հայոց պատմություն, էջ 149)։ Ա. Վարդանյանը, չհամաձայնելով այդ պնդման հետ, նշում է, որ նախ սպարապետությունն արքունի գործակալություն էր և սպարապետի պաշտոնը շնորհվում էր թագավորի կողմից, իսկ Մանվելը սպարապետ է դարձել 377 թ. Կարինի ճակատամարտից հետո, երբ Վարազդատը գահընկեց արվեց և հեռացավ Մեծ Հայքից, իսկ սպարապետ Բատ Սահառունին սպանվեց (տե՛ս Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 64)։ Ն. Ադոնցը, քննելով նախարարական համակարգի կառուցվածքը, նշում է, որ թագավորը ճանաչում կամ վավերացնում էր օրինական ժառանգների իրավունքները և սեփականության իրավունքը նա թողնում էր մեռածի որդուն (տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 504)։ Նախարարական տների ավագ և կրտսեր ճյուղերի իշխանության

Ամրապնդվելով Տարոնում և օգտվելով Հռոմեական կայսրությունում տիրող խառնակ իրավիճակից՝ Մանվել Մամիկոնյանն աստիճանաբար սկսեց իրականացնել իր քաղաքական ծրագիրը: Ըստ Փավստոս Բուզանդի՝ Մանվելը թագավորի մոտ է ուղարկում իր պատգամաբերներին. «ասէր՝ թէ փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ’ի նախնեացն ’ի հնոյ ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք, և եդեալ զանձինս մեր ’ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք ’ի վերայ ձեր»[1]: Նա Վարազդատին մեղադրում է նաև Մուշեղ սպարապետին դավադրաբար սպանելու և Արշակունի չլինելու մեջ ու պահանջում է հեռանալ հայոց թագավորությունից[2]: Մանվելի խոսքերից զայրացած Վարազդատը պատասխանում է սպառնալիքներով և նույնպես առաջարկում է. «Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեալ լիցի զքեզ. երթ գնա յերկիրն Ճենաց անց կեաց, և անդէն թագաւորեսջիր յերկրին քում: Ապա թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ’ի ձեռաց իմոյ որպէս և Մուշեղն մեռաւ»[3]: Լեոն եկել է այն եզրահանգման, որ Շապուհը հանձնարարել էր Մանվելին հեռացնել կայսեր կողմից նշանակված Վարազդատին[4]: Կարծում ենք, որ Մուշեղ Մամիկոնյանի սպանությունը Մանվելի համար զուտ առիթ էր Վարազդատին գահընկեց անելու և իր քաղաքական ծրագրերն իրականացնելու համար:

Ի վերջո, այս երկու ուժերի միջև, հավանաբար 378 թ., Կարնո դաշտում տեղի է ունեցավ ճակատամարտ, որտեղ թագավորական բանակը պարտություն կրեց: Գերի ընկած սպարապետ Բատ Սահառունին, որ Մուշեղի սպանության գլխավոր կազմակերպիչն էր, մահապատժի ենթարկվեց, իսկ Վարազդատին ապստամբները «հալածեցին ’ի յերկրէն ’ի սահմանացն Հայոց. չոգաւ գնաց ’ի յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ և եկեաց, և անդէն մեռաւ»[5]: Կարծում ենք, որ հայոց թագավորի Թուղիս կղզի աքսորվելու գլխավոր պատճառը նրա ձգտումն էր՝ բարելավելու հարաբերությունները Սասանյան Պարսկաստանի հետ: Ուստի պատահական չէ, որ նա Հռոմում անգամ կայսեր տեսակցությանը չարժանացավ

ժառանգականության մասին տե՛ս Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում, (Արշակունիների ու մարզպանության շրջան), Ե., 1934, էջ 223-231:

[1] **Փավստոս Բուզանդ,** էջ 366:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Նույն տեղում, էջ 368:

[4] Տե՛ս **Լեո,** նշվ. աշխ., էջ 491:

[5] **Փավստոս Բուզանդ,** էջ 372: Մովսես Խորենացին, ընդհանրապես չհիշատակելով Մանվել Մամիկոնյանին, նշում է, որ Վարազդատը հարուցել էր կայսեր զայրույթը և այդ պատճառով էլ գահընկեց արվեց ու աքսորվեց Թուղիս կղզի՝ թագավորելով չորս տարի (Մովսես Խորենացի, էջ 378):

և աքսորվեց: Հռոմի տեսանկյունից՝ հայոց թագավորը դավաճանել էր իրենց, ինչի համար էլ արժանացրին նման պատժի: Հայոց թագավորության տեսանկյունից՝ սա ցույց էր տալիս, որ Վարազդատն իրոք փորձել է վարել ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Այսպիսով, Վարազդատի Հռոմեական կայսրություն հեռանալուց հետո 378 թ. Մեծ Հայքի թագավորությունում սկսեց Մանվել Մամիկոնյանի խնամակալության շրջանը, որը շարունակվեց 7 տարի՝ մինչև նրա մահը՝ 384 թ.:

Ա. Վարդանյանն իրավամբ նշում է, որ կատարելով իր առաքելության առաջին մասը, այն էր՝ հեռացնել հայոց թագավորին, Մանվել Մամիկոնյանը փաստացի դարձավ ոչ միայն սպարապետ, այլև ամբողջ Մեծ Հայքի փաստացի կառավարիչը[1]: Ա. Ներսիսյանը և Հ. Հարությունյանը նշում են, որ Մանվել Մամիկոնյանն իրականացնում էր պարսկական ծրագիր, որի համաձայն Մեծ Հայքը պետք է դառնար վասալ պետություն և որի փաստացի ղեկավարն ինքն էր լինելու[2]: Հ. Աստուրյանը հայոց թագավորի և Մամիկոնյանների թշնամական հարաբերությունների պատճառը համարում է Վարազդատի անխոհեմ քաղաքականությունը, ինչն էլ հանգեցրեց Մեծ Հայքից վերջինիս հեռանալուն[3]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերոնշյալը, կարող ենք արձանագրել, որ Պապ Արշակունուց հետո Վարազդատը մի վերջին փորձ կատարեց երկրի ներքին միասնականության վերականգնման համար, սակայն հաջողության չհասավ: Վարազդատի ձախողման կարևոր պատճառներից մեկը հայոց ներքին անմիաբանությունն էր, երբ ավատատիրական հարաբերություններով պայմանավորված, կենտրոնախույս նախարարները արտաքին քաղաքականության մեջ խուսանավելու հնարավորություն չէին տալիս հայոց թագավորին: Մյուս կողմից, սա Շապուհ Բ-ի արտաքին քաղաքականության հաղթանակն էր, ով ամեն կերպ փորձում էր Մեծ Հայքում տապալել Սասանյանների թշնամի Արշակունիների արքայատոհմը, իսկ երկիրը գոնե սկզբնական փուլում վերածել Պարսկական տերությունից կախյալ թագավորություն՝ հետագա վերջնական նվաճման հեռանկարով:

---

[1] Տե՛ս **Վարդանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 65:

[2] Տե՛ս **Ներսիսյան Ա.,** նշվ. աշխ., էջ 105, Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ (1 - 429 թթ.), Ե., 1945, էջ 135:

[3] Տե՛ս **Աստուրեան Հ.,** Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190 էն ն. Ք. մինչև 428 յ. Ք., Վենետիկ, 1912, էջ 314:

Վարազդատ Արշակունու գահակալության պատմափուլում հայոց թագավորությունը կանգնած էր արտաքին և ներքին լուրջ մարտահրավերների առաջ: Տարածաշրջանի երկու գերհզոր տերությունները վարում էին բանակցություններ Մեծ Հայքն իրենց մեջ բաժանելու համար: Դրան զուգահեռ երկրի ներսում ծավալվել էր սուր պայքար քաղաքական իշխանության համար: Արշակունիների արքայատոհմը ժամանակի ընթացքում թուլացել էր, աստիճանաբար նվազել էին թագավորին սատարող նախարարները, պետությունը ներսից բաժանվել էր հռոմեամետ և պարսկամետ ուժերի, Հռոմը ժամանակավորապես զբաղված էր Արևմուտքում իր գործերը կարգավորելով, ինչից օգտվելով էլ Մանվել Մամիկոնյանը պարսկական աջակցության պայմաններում սահուն իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում: Արդյունքում հաղթեց Մանվել Մամիկոնյանի քաղաքական ծրագիրը:

Эдгар Варшамян, Исторический период правления Вараздата Аршакуни - Обобщая вышеизложенное, можно констатировать, что после Папы Аршакуни Вараздат предпринял последнюю попытку восстановить внутреннее единство страны, но безуспешно. Одной из важных причин неудачи Вараздата была внутренняя разобщенность армян, когда центростремительные министры, обусловленные авторитарными отношениями, не давали армянскому царю шанса уйти во внешней политике.

С другой стороны, это была победа внешней политики Шапура II, который изо всех сил старался свергнуть династию Аршакунов, врага сасанидов, в Великой Армении. В исторический период правления Вараздата Аршакуни Армянское царство столкнулось с серьезными внешними и внутренними вызовами. Две сверхдержавы региона вели переговоры о разделе Великой Армении между собой. В то же время внутри страны шла ожесточенная борьба за политическую власть. Династия Аршакуни со временем ослабла, количество министров, поддерживающих царя, постепенно уменьшилось, государство внутренне разделилось на проримские и проперсидские силы, Рим временно был занят урегулированием своих дел на Западе, и, воспользовавшись этим, Манвел Мамиконян легко сосредоточил власть в своих руках в условиях персидской поддержки. В итоге победила политическая программа Манвела Мамиконяна.

Edgar Varshamyan, The historical period of Varazdat Arsacid's reign - Summarizing the above, we can record that after Pap Arsacid, Varazdat made one last attempt to restore the internal unity of the country, but did not succeed. One of the important reasons for Varazdat's failure was the internal disu-

nity of the Armenians, when the centripetal ministers, conditioned by authoritarian relations, did not give the Armenian king a chance to escape in foreign policy. On the other hand, this was the victory of Sapor II's foreign policy, who tried his best to overthrow the Arsacid dynasty, the enemy of the Sassanids.

During the historical period of Varazdat Arsacid's reign, the Armenian kingdom faced serious external and internal challenges. The two superpowers of the region were conducting negotiations to divide Greater Armenia between them. At the same time, there was a fierce struggle for political power within the country. The Arsacid dynasty weakened over time, the ministers supporting the king gradually decreased, the state was internally divided into pro-Roman and pro-Persian forces, Rome was temporarily busy in regulating its affairs in the West, and taking advantage of this, Manvel Mamikonian easily concentrated the power in his hands under the conditions of Persian support.As a result, Manvel Mamikonyan's.

Ուղարկվել է խմբագրություն 05.09.2022թ.
Գրախոսվել է 06.09.2022թ.
Ստորագրվել է տպագրության 07.09.2022թ.